ՆԱԽԱԳԻԾ 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

<< -- >> << ----------->> 2011 թվականի

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ <<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ>> ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱԶԵՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով <ժամանակավոր ներմուծում> ռեժիմով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և անհատ ձեռներեցների (այսուհետ՝ վարկառուներ) կողմից ներմուծված տրասպորտային միջոցների մաքսազերծմանը աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով <ժամանակավոր ներմուծում> ռեժիմով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ վարկառու) կողմից ներմուծված տրասպորտային միջոցների մաքսազերծմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին վարկերի տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության 2011 պետական բյուջեից վարկերի տրամադրման համար ՀՀ ֆինանսների նախարարությանը հատկացնել 300.000.000 /երեք հարյուր միլիոն/ ՀՀ դրամ՝ հետագայում ըստ հայցերի ավելացնելով:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր

պետական եկամուտների կոմիտեի տրանսպորտային միջոցների մասնագիտացված մաքսատան տարածքում գտնվող <ԱՐԱՐԱՏԲԱՆԿ> ԲԲԸ-ում /այսուհետ՝ բանկ/ բացել արտաբյուջետային ցպահանջ բանկային հաշիվ /այսուհետ՝ հաշիվ/՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով <ժամանակավոր ներմուծում> ռեժիմով վարկառուների կողմից ներմուծված տրասպորտային միջոցների մաքսազերծմանը աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին վարկերի տրամադրման համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ժամանակավոր ներմուծման մաքսային ռեժիմով ներմուծված տրանսպորտային միջոցները ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով վերահայտարարագրող քաղաքացիներին բյուջետային վարկեր տրամադրելու մասին

Կարգի հիմնադրույթներ

1. ՀՀ պետական բյուջեից ՀՀ ֆինանսների նախարարությանը հատկացվում է 300 մլն դրամ գումար՝ վարկերի տրամադրման համար;
2. ՀՀ ֆինանսների նախարարությունը գումարը հաշվեգրում է տրանսպորտային միջոցների մասնագիտացված միակ մաքսատան տարածքում բանկային գործառնություններ իրականացնող առևտրային բանկում նախարարության անվամբ բացվող ցպահանջ հաշվին, բանկին լիազորելով այդ հաշվից մարզպետարանների և քաղաքացիների միջև կնքված վարկային պայմանագրերով որոշվող չափով կատարել քաղաքացու մաքսային վճարումները, ներառյալ տույժ տուգանք:
3. Վարկառու կարող են լինել ՀՀ տարածքում մշտական բնակվող՝ 5 մլն դրամից ցածր մաքսային արժեքով/ըստ ժամանավոր ներմուծման մաքային հայտարարագրում նշված մաքասային արժեքի կամ ըստ փոխադրման ամփոփոգրում նշված մաքսային արժեքի/ և 2005 թվականից վաղ թողարկման տարեթվով մինչև 2011թ փետրվարի 5-ը ներառյալ ժամանավոր ներմուծում մաքսային ռեժիմով տրանսպորտային միջոց(ներ) ներմուծած այն ֆիզիկական անձը,

3.1 ով ցանկանում է տվյալ տրանսպորտային միջոցը առանց պետական սահմանը հատելու վերահայտարարագրել ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով, կամ

3.2 ով 2011թ փետրվարի 5-ից հետո վերաարտահանել է նախկինում ժամանակավոր ներմուծված տրանսպորտային միջոցը և պետական սահմանի հատմամբ փոխադրման ամփոփագրով մինչև 2011թ մարտի 15-ը ներառյալ ներմուծել է նույն տրանպորտային միջոցը ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմի համար:

4. Վարկային պայմանագրի կնքման համար ներմուծողը դիմում է իր բնակության վայրի մարզպետարան, Երևան քաղաքում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ներկայացնելով անձնագրի, սոց քարտի և ժամանավոր ներմուծման մաքսային հայտարարագրի պատճենը/կետ 3.1/, կամ անձնագրի, սոց քարտի և փոխադրման ամփոփագրի և վերաարտահանման հայտարարագրի պատճենը/կետ 3.2/:
5. Մարզպետարանի աշխատակազմը, Իսկ Երևան քաղաում՝ ՀՀ ֆինանսնդերի նախարարության աշխատակազմը Հայաստանի Հանրապետության անունից ներմուծողի հետ կնքում է Վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման պայմանագիր, որում՝

5.1 Նախատեսվում է անտոկոս նպատակային վարկի տրամադրում մինչև 2011թ դեկտեմբերի 15-ը մարման ժամկետով,

5.2 վարկի չափը նախատեսվում է ըստ ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով հայտարարագրով նախատեսվելիք մաքսային վճարումների, ներառյալ ուշացման համար մաքսային մարմնի կողմից կիրառվելիք տուգանքի, տույժի չափի/պայմանագրում գումարի չափ չի ֆիքսվում/

5.3 Գրավականի արժեքը նախատեսվում է ըստ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի և մաքսային վճարումների հանրագումարի, առանց տույժերի ու տուգանքների:

5.4 Հանձնարարություն է տրվում ՃՈ գրանցող ստորաբաժանմանը՝ տրանսպորտային միջոցի առաջիկա գրանցումից հետո տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի գրանցման վկայականը տրամադրել մարզպետարանին, Երևանում՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

6. Վարկային պայմանագրերը համարակալվում են հերթական համարներով, կոդավորվում յուրաքանչյուր մարզի կոդով, Երևանում՝ Ֆ կոդով: Վարկային պայմանագրի օրինակելի ձևը հաստատվում է Կարգին կից հավելվածով:

7. Ներմուծողը տրանսպորտային միջոցների մասնագիտացված մաքսատանը ներկայացնում է ընդհանուր ընթացակարգով սահմանված փաստաթղթերը ներմուծում ազատ շրջանառության համար ռեժիմով մաքսային հայտարարագրի կազմման համար: Տրանսպորտային միջոցների մասնագիտացված մաքսատունը ուշացման փաստի դեպքում կազմում է նաև տեղեկանք տվյալ օրվա դրությամբ ներմուծողի նկատմամբ հաշվարկված տույժերի ու վարչական տուուգանքի չափի մասին և տրամադրում ներմուծողին:

8. Մաքսային հայտարարագիրը, իսկ հետախուզման մեջ գտնվող, շարժիչի կամ նույնացման համարի վերադաջված կամ ջնջված համարներով կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ տրանսպորտային միջոցների համար՝ ժամանակավոր մաքսային հայտարարագիրը կազմվելուց հետո ներմուծողը մոտենում է սպասարկող բանկին՝ վճարումները կատարելու համար, ներկայացնելով նաև մարզպետարանի/նախարարության/ հետ կնքված վարկային պայմանագիրը, տույժ տուգանքի դեպքում՝ նաև մաքսային մարմնի տրամադրած տեղեկանքը:

9. Սպասարկող բանկը վարկային պայմանագրի հիման վրա իր մոտ սպասարկվող ֆինանսների նախարարության ցպահանջ հաշվից կատարում է ներմուծողի անվամբ մաքսային վճարումները, ներառյալ տույժ տուգանք, վճարման փաստաթղթում հղելով վարկային պայմանագրի համարին, մաքսային հայտարարագրի համարին և վճարումները հավաստող փաստաթուղթ տրամադրում ներմուծողին, ըստ վճարման տեսակների :

10. Ներմուծողը վճարման փաստաթուղթը ներկայացնում է մաքսային տեսուչին որը ընդհանուր կարգով հաստատում է մաքսային հայտարարագիրը և գործը սահմանված ընթացակարգերով ուղարկում Ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանում:

11. Սպասարկող բանկը յուրաքանչյուր շաբաթը ավարտվելուց հետո տվյալ մարզպետարանին /նախարարությանը/ ներկայացնում է կատարված վճարումները ըստ վարկային պայմանագրերի:

12. Մարզպետարանը, Երևանում՝ Ֆինանսների նախարարությունը վարկային պայմանագրերը և վարկի վճարումները հավաստող տեղեկատվությունը ներկայացնում է վարկառուի բնակության վայրը սպասարկող ՃՈ ստորաբաժանմանը՝ տրանսպորտային միջոցի նկատմամբ Հայաստանի Հանրապետության գրավի իրավունքը գրանցելու համար:
13. Գրավի իրավունքի գրանցման մարզպետարանի/նախարարության դիմումին կից՝ <Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին> օրենքով պահանջվող սեփականության վկայականի պատճենը ՃՈ ստորաբաժանումը մարզպետարանից/ նախարարությունից չի պահանջում և սեփականության վկայականը Վարկային պայմանագրով սեփականատիրոջ կատարած հանձնարարության հիման վրա ուղարկում է մարզպետարան/նախարարություն՝ որպես գրավառուի, միաժամանակ <Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին> օրենքով սահմանված կարգով կատարելով արգելադրում վարկի գումարի չափով: Հայաստանի Հանրապետության գրավի իրավունքի գրանցումը ՃՈ-ն կատարում է առանց ՃՈ արտաբյուջեի օգտին վճարներ գանձելու:
14. Մարզպետարանի կնքված վարկային պայմանագրով վարկառուի կողմից վարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողությունը և պայմանագրից ծագած պարտատիրոջ ու գրավառուի իրավունքները իրականացվում են մարզպետի կողմից՝ Ֆինանսների նախարարության վերահսկողությամբ:
15. Ներմուծողի կողմից մաքսային մարմնի գործողությունները հետագայում վիճարկելու հետևանքով պետական բյուջեից կամ մաքսային մարմնի արտաբյուջետային գանձապետական հաշվից վերադարձման ենթակա՝ ավել գանձված մաքսային վճարումների, տույժերի, տուգանքի գումարը ֆինանսների նախարարությունը առաջին հերթին ուղղում է տվյալ քաղաքացու վարկային պարտավորության մարմանը: